ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» հունվարի 2023թ. N 06-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 7-րդ մասով, 35-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքաշինության բնագավառի գործունեությունների տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 27 որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «ԼԱՎՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիցենզիայի N 17060-12 և N 17060-13 ներդիրների գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:

2. Կասեցնել «Արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի N 16973-12 և 16973-13 ներդիրների գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն,

2) համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

1/30/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ